

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարադպրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“

ՄԱԿ

Խմբագրատունը բաց է առաժօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն օր և գումարով

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Դառն ճշմարտութիւն:—Ն ե ռ ք ի ն տ ե ս ու լ
թ իւն: Նամակ Բաղուկ: Նամակ Մեծ-Ղարա-
քիսայից: Ներքին լուրեր:—Արտաքին տե-
սութիւն: Թիֆլիս: Նամակ Խմբագրին:—
Խառն լուրեր:—(Մշակ) Կեռագիրներ:—
Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ԴԱՌՆ-ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի հայերը անցեալ տարի սպասում էին իրանց հայ-
րենքի վերածնութիւնը Եւրո-
պայի ձեռքից: Ինքնի դաշնա-
գրի 61-որդ յօդուածը խոստա-
նում էր նրանց նոր կեանք շնոր-
հել:...

Բայց մինչև այժմ ի՞նչ ստա-
ցան հայերը. ոչինչ: Բնդհակա-
ռակն նրանց դուրսի վատա-
ցաւ, աւելի անտանելի դարձաւ:

Եւ ահա այժմ ամեն կողմից մեզ հաղորդում են, և նոյն լու-
րերը կարդում ենք և օտարազգի
լրագիրների մէջ, որ Հայաստանի
հայ ազգաբնակչութիւնը եկող
գարնան պատրաստ է ցրուել,
գաղթել ուր որ կը պատահի:
Երևում է որ թափառական և
գաղանաբարոյ քուրդերի հարս-
տահարութիւնը էլ չափ ու սահ-
ման չունի, Թիֆլիսը վարչու-
թեան պաշտօնականների կողմից
ժողովրդի վրա ներգործած ճշն-
շումը հասել է անասելի աստի-
ճանի:

Բայց Հայաստանի հայերը չեն
միայն որոնք պատրաստվում են
գաղթել իրանց հայրենիքից, նոյն
դիտաւորութիւնն ունեն և Հայաս-
տանում բնակվող ստորին, մանա-
ւանդ երկրագործ գոտին պատ-
կանող մահմետականներն էլ:

Ուրեմն երևում է որ Հայաս-
տանի բնակիչներից կրած անա-
սելի նեղութիւնները բնդհանուր
են և նոյն աղբիւրից են ծագում:
Երևում է որ գաղթականութեան
ոգին հայոց յատկութիւն չէ
միայն, այլ ծագում է աւելի խոր
և բնդհանուր պատճառներից, ո-
րոնք կապ ունեն Թիֆլիսից պե-
տութեան բնդհանուր տաքնապի
հետ: Դա տեղական մի հի-
ւանդութիւն չէ, ուրեմն, այլ

սերտ կապ ունի պետական կազ-
մուածքի բնդհանուր հիւանդոտ,
օրհասական դրութեան հետ:

Եւ տեսակ ցուցերի դէմ, ինչ-
պէս բժշկականութեան մէջ, հար-
կաւոր է գործ դնել ոչ թէ տե-
ղական, մասնաւոր հնարներ, այլ
բնդհանուր, խիստ և արմատա-
կան միջոցներ:

Հասկացել է արդեօք Եւրո-
պան որ Թիֆլիսից պետական
մարմինը կատարեալ քայքայման
պրօցեսի մէջ է գտնվում:...

Կամայականութիւն պետական
պաշտօնականների կողմից, աւագա-
կութիւններ վայրենի ցեղերի կող-
մից, պետական հարկերի չափից
դուրս բարձր լինելը, բնդհանուր
չքաւորութիւն ամբոխի մէջ, շատ
տեղերում սով և հիւանդութիւն-
ներ, ճանապարհների պակասու-
թիւնը, կրեդիտի բացակայու-
թիւնը, բնութեան հարստու-
թիւններից օգուտ քաղելու ան-
կարողութիւնը գումարների պա-
կասութեան պատճառով, պետա-
կան օրէնքների հնացած և ան-
ժամանակակից լինելը, քաղաքա-
ցու անձնական և կայքի անա-
պահով լինելը, պետութեան ղեկը
ձեռքում բռնող բարձր պաշտո-
նականների վարչական անբնդհան-
կութիւնը, նրանց ղեկի և ան-
բարոյական կեանքը, ամենքի կա-
շառակերութիւնը, իրաւունքների
անհաւասարութիւնը օրէնքի առ-
ջև, վերանորոգութիւններ երկրի
մէջ մտցնելու կառավարութեան
անբնդհանրակութիւնը և նրա ղեկի
ամեն նորութիւններ զգլանքը
մահմետական կոյր ֆանատիկո-
սութեան պատճառով,—ահա, մի
քանի լայն գծերով, Օսմանեան
պետութեան տնտեսական և վար-
չական տխուր պատկերը:...

Եւ դեռ գտնվում են քաղա-
քականութեան մէջ միամիտ,
կամ մարդկութեան առջև յան-
ցաւոր դիպլոմատներ, որոնք խո-
սում են Թիֆլիսի որպէս պե-
տութիւն պահպանելու ան-
հրաժեշտութեան մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

12 յունվարի

Նախի պատճառով Բագու զարձկ է երկ-
րորդ կալիֆօրնիա, ուր ամեն տեղերից և ազ-
գերից մարդիկ հեղեղի պէս են թափվում ամեն
օր տասնաւոր կառքեր և սայլեր են մտնում
այստեղ բազմատեսակ եկաւորներով բնաւոր-
ված. ուստի մեր քաղաքը յանկարծակի այնպէս
բազմամարդ եղաւ, որ այժմ խառնութիւնի և բնա-
կաբանների կատարեալ սով է ընկել: Եկաւորների
նշանաւոր մասը հայեր են, առաւելագոյն Ղարա-
բաղի, Շամախու և Տաթևի վիճակներից, որոնք
գալիս են փող վաստակելու, Բագուի ոսկեհանքից
իրանց բաժինը վերցնելու: Այլազգիների մասին
խօսելը ուրիշ ժամանակի թողելով, այժմ միայն
տեսնենք, թէ որպիսի մարդիկ են այս հայերը
և ինչ պատճառով են իրանց սիրելի ծննդավայ-
րից հեռանում և պանդխտութեան անձնատուր
լինում:

Եկաւորների մէջ առաջին տեղը իրաւամբ
պատկանում է այն վաճառականներին, որոնք
գումար ունեն կամ ունենցել են, բայց այժմ իրանց
տեղերում բնդարձակ յաջողութիւն չը տեսնելով
գալիս են նախի գործերում խառնվելու կամ
այլ առուտորի ձեռնարկելու: Սրանք աշխար-
հաքաղաքայի են և, ոչ մի տեղի հետ կապված
չը լինելով, միշտ այն կողմն են վազում ղեկի ու
մղվում են հանգամանքներից և իրանց շահերից,
ուստի սրանց մասին խօսելիք չունեն, ուր ու-
ղում են թող գնան:

Մի տեսակ մանր վաճառականներ կան, որոնք
սակաւ կամ ամենաչնչին գումարով իրանց տե-
ղերում լաւ առուտուր ունեն, չափաւոր վա-
տակ են ձեռք բերում և նրանով բաւական ա-
պահով ապրուստ անում. բայց սրանք ևս ազա-
նութիւնից յաղթված վազում են Բագու, ուր առ-
ժամանակ պարապ մնալով և խառնութիւնի վար-
ձի ու միւս ծախքերի չափազանցութիւնը տես-
նելով շատերը յետ են գնում, իսկ ոմանք մնում
են դանդաղ պատճառներից ստիպված, և քի-
չերն են յաջողութիւն գտնում իրանց յուսացա-
ծին համեմատ:

Ազգային և քաղաքային դպրոցների նորաւարտ
սաներ, սնանկացած վաճառականներ, պաշտո-
նաթող աստիճանաւորներ և այլ տարբեր ըն-
դունակութիւնների և ուսմանքի տեղ մարդիկ
կան որ գալիս են գործակատար լինելու, ծա-
ւալելու, ուրիշներին առևտուրի զանազան մա-
սերում, մանաւանդ նախի հանքերում և գոր-
ծարաններում և սրանք խիստ բազմութիւն են,
տեղ թէ և գտնում են, բայց շատերը մեծ նեղու-
թեամբ և ամիսներով պարապ կենալուց և ամե-
նատեսակ զրկանքների համբերելուց յետոյ իսկ
որոնք հետ բազմը խնայված է կենում են կե-
նում, ձեռքներին ունեցած մի քանի կոպէկն էլ
խարջում ու այնպէս յետ գնում իրանց տեղերը:

Արուեստաւորներ և շատ են գալիս և գրէթէ
ամենքն էլ անպակաս գործ են ձարում. մա-
նաւանդ երկրագործները և տակաւագործները
(վերջիններս ձմեռային ամիսներում ոչ այնքան)
միշտ գործ ունեն և նախանձելի վաստակ են վեր-
առնում: Մի քանի արհեստաւորներ (ղերձակներ,
կոշիկաբաններ, ոսկերիչներ, և այլն), որոնք ան-
պատճառ պէտք է բազմամարդ փողոցների
վրա արհեստանոց ունենան և այնտեղ բանեն,
վերջին ժամանակներս բնակարանների թանդու-
թեան պատճառով շատ դժգոհ են, չեն կարո-
ղանում այնքան վաստակել, որ համ ծախքերը
ծածկեն, համ էլ ապրին օրինաւոր. սրանցից
շատերը յուսահատած կամեղում են յետ գնալ,
բոլորովին անհնարին տեսնելով գործը շարու-
նակի ներկայ հանգամանքներում: Որմեղոր-
նեք, քարտաշների, հիւսնների, դարբինների, եր-
կաթի և պղնձի ամենատեսակ վարպետների

գործը շատ աղող է, որովհետև նրանք ուրիշնե-
րի համար են բանում և ստիպված չեն կրակի
գնով խառնութիւն կամ բնակարաններ վարձելու,
իսկ իրանց կենալու բանը մի կերպ է օւլայ է
գնում, տեղ ձարում են:

Մի տեսակ եկաւորներ ևս կան 10—20 տա-
րեկան պատանիներ, որոնք ոչ փող ունեն, ոչ
արուեստ և ոչ մի այլ միջոց ապրելու բացի
հասարակ գրագիտութենից (անգրագէտներ էլ
կան). սրանց փոքր մասը ծառայութեան է մըտ-
նում տնեւում և կամ վաճառականների մօտ, իսկ
մեծ մասը արուեստների է աշակերտում, մանա-
ւանդ երկրագործութեան և տակաւագործու-
թեան, ուր և բաւական առաջադիմութիւն են
անում: Այստեղ մօտ տասն բնդարձակ մեղեմա-
կան գործարաններ (механический завод) կան
ընկերութիւնների և մասնաւոր անձերի պատ-
կանաւ. ուրախալ է տեսնել, թէ նրանցում
հայ տղաները որպիսի սրամտութիւն, աշխա-
տասիրութիւն, ճշգրտութիւն և օրինակելի եռանդ
են ցոյց տալիս սովորելու և բանելու ժամանակ:
Այս գործարանների այլազգի վարպետները (որ
առաւելագոյն գերմանացիք, ռուսներ, չուէշներ,
և այլն, են) վատ են վարվում հայ աշակերտնե-
րի հետ և իրանց համարութիւնը այնպէս գործա-
ծում, որ սրանք չը կարողանան շուտով սովորել,
և առանց թաղցնելու յայտնապէս ասում են
իրանց չը կարողանան: Թէ և բազմութիւն արգե-
լաութիւններով պատած, թէ և մեծաւորների և
վարպետների խօսած լեզուն շատ անգամ ան-
հասկանալի է իրանց, հայերը այնու ամենայնիւ
առաջ են գնում և այս րօպէիս նրանց մէջ լաւ
վարպետներ և լաւաւոր վարպետացուներ կա-
րելի է մասնացոյց անել, որոնք ժամանակով
հասարակութեան կարեւոր անդամներ կը դառ-
նան անշուշտ: Ուշագործութեամբ զննողը չէ կա-
րող հայ և այլազգի պատանիների մէջ եղած
մեծ դանդաղութիւնը չը նշմարել. ես շատ ան-
գամ լսած եմ օտարազգի վերակացուների գո-
վածանքը և լաւ վկայութիւնը հայերի վարք ու
բարքի և ընդունակութեան վերաբերութեամբ:
Նրանի թէ մեր հայ տղաները հնամուլ և կոպիտ
արուեստաւորների մօտ, բարեխիղճ վաճառական-
ների խառնութեան և հարուստների խոհանոցնե-
րում տարիներով քաղ գալու, ստրկանալու և բը-
թանալու փոխանակ ամեն հնարքով աշխատելին
մեղեմական գործարաններում մտնել ղեռնդիլը նը-
րանց բոլոր մասերում և համբերութեամբ ու խոհ-
մութեամբ ուսանել. եթէ ոչ օտարները անա գալիս
են օրըստօրէ և այս ապահով ու արդար հացը կը
խլեն տեղացիների ձեռքից:—Մի արդիւնաւոր
գործ էլ սպլապապութիւնն էր մինչև այժմ,
որին ահա մահացու հարուած կը տան երկա-
թուղիները շուտով, թէ և նրանով շատ քիչ հա-
յեր էին զբաղված: Զարմանալի է և այն, որ
այստեղի ծովային գործերում ևս հայերը շատ
սակաւ են. բազմութիւն նաւերում բոլոր պաշ-
տօնականները Թիֆլիսի են, ռուսներ և այլազ-
գիք: Հայերի համար այն ասպարէզը վատ չէր
լինի, հաւատացած ենք որ շատ առաջ կը դը-
նային և կը շահվէին ամեն կերպ. եթէ մի քա-
նիսը վստահանան ու սկիզբն անեն, հետևողներ
և նմանվողներ շատ կը լինեն անպատճառ:

Ամենից շատ երկողներ անարուեստ և ան-
խելք գիւղացիքն են, որոնք թէ քաղաքում և
թէ դուրսը բնուսովի, զեչերապաշի, մշակի
պաշտօն են վարում և այլ ամենատարակ գոր-
ծեր կատարում չափաւոր վարձով: Սրանց ամե-
նափոքր մասը միայն պատճառ ունի օտարու-
թիւն դալու: Ոմանք հօբից մնացած և կամ ի-
րանց վեր առած պարտք ունեն, որ անեղ վի-
շապի պէս բարդ տոկոսով աճում է օրըստօրէ:
պէտք է փող աշխատեն և տանեն վճարեն: Ո-
մանք գիւղումն ապրելու ոչ մի հնար չունեն—
ոչ հող, ոչ կալուած, ոչ գրաստներ և ոչ այլ ա-
նասուններ. բնամայրը հաց և հազուադէպ ու-
ղում, հարկերը պահանջում են անխնայ, իսկ
այնտեղ մշակութեան գործեր չը կան և իրանց
աշխատանքը չէ վարձատրվում. պէտք է փող

Ամբոխը, ինչպէս այլ գործերում նոյնպէս և
գաղթելու կամ պանդխտութեան մէջ, իրան հա-
մար առաջընթաց օրինակներ է որոնում միշտ
և գտնում է. մի լաւի մարդիկ այսպիսի ան-
տէր ժամանակներ զգալով այստեղ զանազան բե-
րմունքներով հարստացել են և զանիքի ի դէ-
պէս դարձել. ով ասես նրանց է աչքի տակ առ-
նում ճանապարհ ընկնելիս և այստեղ իր բա-
նուկները կան, որոնք նրանց բաղդին յուսա-
ցածով, ծառայութեան անտեսելի լուծը երկար
ժամանակների ընթացքում կրում են անմոռնի-
ցիկ վատ բան էլ այն է, որ վերջին ժամանակ

ներս սկսել են ընտանիքներն ես բերել, կանայք եւ երեխաներ բուսականութեամբ չընկալուած, իրանց ընդարձակ բնակարաններէն տեղահան արած բերվում են եւ ամեն բնական զարդարանքից զուրկ այս նեղ ու փոշեկից բանտի մէջ ածվում, ուր նրանցից չատերը թողախտի, փորաւում թուլեան, եւ այլ պատահարների զոհ են գնում, Բազուն, ամառամաղ ածաւոր, կանանց եւ երեխաների տեղ չէ, հէջն անցեալ ամառ իմառ իրքան երեխաներ մեռան... Այս դէպքում եւ զարձեալ անհաշիւ նմանողութիւն... ունեորներ ընտանիքը գալիսն, բայց միջոց ունեն օրինաւոր կերակրվելու, հազնվելու, ընդարձակ բնակարաններում կենալու, հացկերոյթներ ի ինչոյքների մէջ ուրախ օրեր անցկացնելու, միշտ ամառանոց գնալու եւ վերջապէս ամեն յարմարութիւն ունենալու, իսկ չունեորներն ինչ կարող եւս ենել, այս միջոցներից թր մէկն ունեն:

Այսպէս անա մեր գաղթականը հայերը, յամարժանի հարստանալու ցանկութեամբ հրապարակած առանց ան ու ձախ նայելու, շտապում են միմեանց առաջը կտրել և շուտով Բագրու բնակիչ դառնալու մարդ զարմանում է, թէ քիչ խելքով և քիչ սրտով սրանք թողում են իրանց գեղեցիկ ծննդավայրերը, քաշնելի և բանաստեղծական երկիրները, ծնողներ, ազգականներ, ամուսիններ, զաւակներ և այլ շատ սեփականութիւններ ու գալիս այստեղի փոխն կու տալու։ Այս գաղթողների գոնէ 60% իր տեղը կարող է մնալ, առուստուր անել, երկազործութեան ամեն կերպերով զբաղվել, արուեստներ բանեցնել և իր գերդաստանի ամբողջութիւնը ու բաղադարութիւնը անխախտ պահպանել, ինքն միայն հասփարողութեան օգուտը և ազահանութեան վնասը կապահանա։ Այնտեղ իրանց սեփականութիւն գերական տնտեսութիւնը կառավարելու և արգիւնքը ժամանակին վեր առնելու համար ուրիշներին են թանգ գնելով վարձում մոծամոծ դժուարութիւններով իսկ իրանք այստեղ նստաթաթախ, թողի մէջ թաղված, աղաներին ըստրուկ գործած, մի քանի կուպէկի վարձով օտարները դարձնել են կատարակ, այսպիսիներին մի քանի հարկներով կարող եմ հաշուել, որոնք ճանաչում եմ անձամբ և զիտեմ թէ նրախոր յաջող պարագաներ ունեն իրանց տանը բաղդատը ապրելու համար։— Գուցէ ոմանք պատճառ բերեն թէ իրանց տեղերում նաղդ փողը շատ սակաւ է, այն ինչ այստեղ առատ է, այսուր չէ, բայց մի տեսնենք թէ փողը վաստակում ենք ապրելու համար, թէ ասպրում ենք փող վաստակելու համար, որն է, իսկ այն մաքուր օղը, ազատ կացութիւնը, բազմատեսակ սնունդը, ընտանեկան վայելչութիւնները և այլ անթիւ բարիքը, որոնք օտարականը ունի իր ծննդավայրում, չը պէտք է հաշուել, այս ասած վայելքի կէսը կամ գոնէ քառորդը ճրքանով կարելի է այստեղ ձեռք բերել և այն ժամանակ օտարականի վաստակից քանի կուպէկ են մնալ մէջ տեղ։ Առողջ և զուարթ որ գալիս են ու հիւանդոտ, նուազած և հանգած յետ դառնում այն ոչինչ, նրանց յետ ձգած մի քանի բուրդ իրանց կեանքի գինն է, որը տարիներով վիպանում են նեղ ու խոնաւ գետնափոր ծախուռներում և այլ անթիւ զրկանքները ու կարօտութիւնների մէջ։ Այստեղ ով կամենայ փող յետ ձգել պէտք է անպատճառ իր մտից կտրէ։ Եւ միթէ ամեն եկողներ յետ են գնում և փող վաստակում, զաւ լիցի, քանիք ընտիրը հիւանդանոց, և իր տաւ րով ու ու աննախ մնալով տանջվում ու մեռնում։ Քանի քանիք յաջողութիւն չը գտնելով կամ մտից կտրելով փորձանքին չը զիմանալով յուսահատում են կապները կտրած գուրս ընկնում, ամօթալի ըզբաղմունքները ձեռնարկում ու վերջապէս յաւիտեան կորչում իրանց գերդաստանի և հասարակութեան համար, այն ինչ նրանք հարկները լուծ մնալով տեղի ամենալաւ և պիտանի մարդիկ էին լինելու, որովհետեւ գաղթողները իրանք քանիչուր գերդաստանի ծաղկը, ընդունակ և երիտասարդ այժմերն են։

Ինչպիսի կարելի է այս հոտանքի առավել կտրել
 քնչ հնարներ պէտք է դործ դնել ժողովուրդը
 իր ծննդավայրի հետ անբաժան կերպով կապե-
 լու, խնդրում ենք, որ պատասխանեն այն ժա-
 դասէր անհիմքները, որոնք այս մասին հիմնա-
 ղոր տեսակներ ու գործնական հմտութիւններ
 ունեն ձեռք բերած:

Կապույտացի

ՀԱՄԱԿ Մ. ՂԱՐԱՔԼԻՍԱՅԻՑ

15 յոԼնվարի

Անշուշտ մի օր Ղարաբլիսայից ստեղծվելու է մի երկրորդ Ազոտլիս, եթէ միայն երկրի ներքայ դուռնիքը այս կերպ ընթանայ. նրանք ունենալ լաւ ծանօթ են այդ գիւղի կեանքին, մեզ հարաւունք էր տաւս այս կարծիքը յայտնելու: Երբեք եթէ յանկարծ մի անհեղուկ շէնքամի, մի անգուշ ձեռք, թունաւորեց այդ ժողովրդի պարզ աւ խաղաղ կեանքը, այդ մասին առ այժմ մենք ենք կարող մարգարէի դեր կատարել. սա միայն պարզ է որ Ղարաբլիսայի հօրիզոնի դեռ եւս ըստ որովմէն ծայրոււ, անշնան կերպով երևում են մուսլայտ ամպեր, որոնք սպառնում են ամբողջ հօրիզոնը ծածկել: Պարզիքը մեր խօսքը, Ղարաբլիսան ներկայումս ունի երեք քահանայ, դռնակից մէկի անգրագիտութիւնը եւ անընդունալութիւնը ծայրայեղութեան է հասնում, որքան զիտանի կարող է լինել, ընկերացողին հասկալով է, եւ լռում եւս Երկրորդը արդէն ծերացած է հիւանդոտ, ուրիշ ոչինչ չէ մնում նրան երեսն ըայց միայն հանգիստ ու անվրդով անցալցանել իր կանխքի վերջինք րօպէսները: Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ այդ քահանան իր ժամանակին մի գործունեայ անձն է եղել, նա քիչ չէ օգնել դպրոցի բացմանը, աւակցութեամբ եղբայր խանադեանց, որոնց հոգատարութեան ներքոյ երկար տարիներ կառավարվում էր դպրոցը. մի խօսքով այդ անձը որպէս հոգեւորական եւ որպէս հասարակական քաղաքացի անդառ, մի համեստ տեղ ունի բռնաժողովրդի պատմութեան մէջ, որը մենք միտք ունենք մի օր հրատարակել, իր կրած բոլոր փոփոխութիւններով եւ իսկական զոյներով: Երրորդ քահանան, «Մշակ» ընկերացողներին արդէն յայտնի է: Քահանայական բոլոր ծանրութիւնը մնում է ուրեմն վերջինի վրա, նա եւ քահանայ է, եւ ուսուցիչ շարաբակեան 26 դասով, եւ հոգաբարձու, եւ դանձապահ դպրոցի, եւ հաշուապահ եկեղեցական դրամներէ եւ այլն եւ այլն:

Որոշաց լիզուի գիտեանէն էլ խում մի խաթա-
բալա է դարձել խեղճի զվարն. տէր հայր, այս
գրիւր, այն գրիւր. և այս ամիւնը այդ բարեխիղճ
մարդը տանում է տոկուն համբերութեամբ, բա-
ւապապէս միայն պարձաբառիկովով: Անդ անհաս-
կանալի է թէ քնչպէս կարելի է մի մարդու այս-
բան ծանաբանեանէ գործերով. բայց գիտէ՞ք
դուրս հետեանքը ինչ կարող է լինել, այն որ ոչ
մէկը ճշգրտութեամբ կատարել չէ կարող: Այն ան-
ձինք, որոնք գործում են հասարակական ասպա-
րիզում, հարկաւոր է և պէտք է խնայել նրանց
առողջութիւնը, չը պէտք է սպառել այդպիսի-
ներ պիտելը, եթէ միայն ցանկալի է մեզ եր-
կար օրեր օգտովի դրաց գործունէութենից: Անէք
յետոյ կը հասկանանք մեր սխալը, կը զզվանք,
բայց արդէն ուշ կը լինի: Բայց գեթ ուշ չէ.
հարկաւոր է այժմեանից խել մտածել նրան հաս-
կացող, ամէն գործում աջակցող, խրախուսող,
բարոյապէս մխիթարող և համապատասխան ըն-
կերիներ տալ: Զանքերնս իմանք ունենալ մշտ
խոհմէն ու դարձեալն—այս երկու անհրաժեշտ
խաղիւթ իշխանները իր մէջ մարմնացած—հոգեո-
րակալութիւն: Այն ժամանակ միայն, իրաւունք
կունենանք պարօնեալ պանծալի ապագայով:
Սա մեր բոլորիս ցանկութիւնն է, ես հաւատացա-
նմ: Բայց գիտէ՞ք ճիշդքը են ստորաաստիւում այդ
վեհ ու սուրբ պաշտօնի համար, ովքեր են ձեզ
մէջ հասարակական սրբազան ասպարէզում
գործելու, կամ տալի ձիւղ ասել, հասարակա-
կան գործերը տակն ու վրա անելու. ցաւալի
իրողութիւն. տիրացու թաթոսներ, Մարկոսներ,
Ուշանէսներ, խաչապաններ, մազգործներ ու
միկիտաններ: Այն անձը, որ պիտի ինձ ու քեզ
օղի է խմացնում, ուրեմն և մի աննեքիլի մոլու-
թեան մէջ գլորում, վաղը սուրբ տաճարի սե-
ղանի վրա կննդաձծ, ձեռները երկինք կարկա-
ռա՞ծ առաքինութիւն պիտի բարոյէ մեզ. իր
մաստ, օղիոտ և խոչոր ձեռները պիտի վստահա-
նայ համբարուել տալ ինձ ու քեզ, որպէս սուրբ
հօր ձեռներ: Իսկ դրանց դարգացման, խարդախ
քնաւորութեանց և կեղծ բարոյականութեան
հետ մենք ամենքս քաջածանօթ ենք. իմ զրիչն
անոր է մի առ մի նկարագրել այդ ամիւնը: Ես
ակամայ լուում եմ:

Հրաւիրում ենք հող. կառավարութեան մէջ
գործող անձանց փոքր ինչ խղճահարկելու:

Մեծադյուս ենք որ տեղական հոգեորականությունը, երիտասարդությունը, նոյն իսկ տանուտե՛րը, ուսուցիչները և այլ բանիմաց անհատներ, թոյլ չեն տալ ամբողջին այս սխալ ու վտանգաւոր քայլը անելու, որը այնքան ոյժ և ընդունակու-

թիւնն չունին դիմակի տակ ծածկված խորդախու-
թիւնները նմարելու: Աճապարհներ, պարոններ,
վտանգի առաջն պոնելու, քանի նա խոր ար-
մատներ, ուտեր չէ արձակել, եթէ միայն ցան-
կալի է մեզ միշտ հայ լրագրութեան համա-
կրութիւնը ու յարգանքը վայելել. եթէ միայն
ցանկալի է մեզ չնկթարկել եկող սերունդի ար-
գար դատապարտութիւնն ու բարորակութն չը
մենելն, Հաւատարմութիւնն ու բարորակութն չը
նենն մեր ջանքերը, մեր կազմած նախագծերը
դպրոցի ու հասարակական այլ ու այլ թէ ներքին
և թէ արտաքին բարեկարգութեանց մասին. այդ
ամենը մի անշնորհ, անընդունակ հոգեւորականի
ձեռքով հինն ի վեր կը տապալվեն, լաւ էր
եթէ նա ընդունակութիւնն չունենար չարու-
թիւնն գործելու. որի օրինակը մինչ օրս ենք, էլի
այնքան միտն չունէր:

Բողոքներն ուրիմն բարձր հոգ, իշխանութեանը, նոյն իսկ Վեհափառին, ցոյց տանք որ հարկաւորութիւն չունենք մինչև անգամ ուրիշ տեղից մարդիկ մուրալու. մենք աւելի ընտիր, ընդունակ խոհեմ, հասարակութեան վրա բարոյապէս աղոյող մարդիկ ունենք. միթէ սա չէ և Վեհափառի միակ ցանկութիւնը. նա աւելի ուրախ կը լինի, որ մենք ընդունակութիւն ունենք աղչուածով մարդոց ընտրելու այդ սուրբ կոչման համար:

Մի վահանք, մի վահադե, մեր ձայնը խարդախ մարդիկ չեն կարող խնդդել և մենք անպատճառ յաղթանակաւ գլուրս կը գանձ ասպարիդից, յուսանք ուրեմն, որ իմ այս մի քանի խօսքերը արձագանք կը գտնեն ձեր սրտում և որ Ղարաբեղիսայի հօրիդոնը կը մաքրվի մրկալից ամպերից ու մեր զեղեցիկ յոյսերով լի ապագան, մթնոլթեան ու խաւարի մէջ չի թաղվի: Հետեւեալներն մասին կը զրննք յետոյ. սպասենք, տեսանք, ինչ կերպարանք կառնէ այս ծանրաւիշիւ հարցը:

Մե խուճբ երիտասարդներէ կամենում են Ղարաբլիսայում մի ներկայացունալ տալ յօգուտ զարդոյի գրադարանին. ցանկանք յաւոյդութիւն, հասարակութեան կողմից համակրութիւն և աւելցորութիւն: Հասարակական կանաչի միւս երեւոյթներէ մասին, մի ալլ անգոյն:

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս ուղեորվեց դէպի Երզրում մշտա-
կան պաշտօնով պ. Կ ա մ ա ր ա կ ա ն, որ այ-
դէն յայտնի է մեզ մանկալաւ կողմից իր գոր-
ծանէնութեամբ, երբ Երզրումի քաղաքացեալ
պաշտօն էր վարում, իսկ յետոյ նոյն քաղաքի
ուսուցչ ընդհանուր Հիւպատոսի ժամանակաւոր
պաշտօնակատար էր:

Մեզը գրում են ՆՈՒՍՈՒՅԷ, որ այս ֆաղաբի
հայերը մի զտրմանալի բացառություն են կազ-
մում՝ հզվկասեան ամբողջ հայ ազգաբնակչության
մէջ իրանց տղիտությունամբ և անգործունէու-
թեամբ: Քանի որ Նուխու գաւառում դեռ չը
կայի չեքամա՝ հիւանդությունը, միւս քաղաքներ
հայերը հաադին հարստութիւն էին տաւանում
Նուխուց, մինչդեռ նրա սեփական բնակիչները
չարունակում էին անգաղար քէ ֆերով դաազ-
վել իրանց աղբիւնբում և մնալ յետին կողմէկ
յուսսով: Նուխու հայերի աղբ յատկութիւնն է
գուցէ պատճառը, որ Նուխին միշտ յետին քա-
ղաքն է եղել մեր լրագրողութեան համար, ինչպէս
բամանորդագրութեան, այնպէս էլ կանստաւո-
թիթեակցութիւնների կողմից:

Արդէն դուրս եկած ԹԻՖԼԻՍՈՒՄ հրատարակ-
վող Թուրքաց «Ջիւա» լրագրի առաջին համարը
Թուրքաց «Արշալոյսի» այդ առաջին համա-
րում նրա խմբագիր խօսում է ժամանակակից
մամուլի ստացած նշանակութեան վրա, Շատ
ուրախ ենք որ մեր մուսուլման եղբայրները
վերջապէս կռնենան մի լրագրի, որ իր բարձր
շնչները պէտք է անէ լուսաւորութիւն տարած
մեր յետ ֆնաած թուրք ազգաբնակչութեան մէջ

Ռուս (ОБОРУД) արագիրը մեծ համակրու-
թեամբ է ապրում իր 366 համարի մեջ մի-
պարունի յոդուածը, որով նա խորհուրդ է տա-
լիս կովկասում բնակվող ռուսներին սովորե-
նայոց և վրաց լեռնաբնակիչը, իբրև կովկասյան ճա-
նաչելու և ռուսապանդխտության միակ միջոց:

Ստացանք յօգուտ «Արարատեան ընկերու-
թեան» պ. պ. Աղա և Գէորգ Մուրադեաներից 20
թուի:

